ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« » _____ 2016թ.
N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ

Հարգելի սպաներ, ենթասպաներ, կրտսեր հրամանատարներ, զինվորներ

Առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ Ձեզ Հայոց ազգային բանակի 24-րդ տարեդարձի կապակցությամբ: Մեր ժողովրդի պատմության ամենափառավոր էջերից է Հայոց բանակի ստեղծումը, որը մեր պետության անկախության ու հայ ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորն է:

Բանակի կազմավորման ակունքներում մեծ ու անուրանալի է Շիրակի նվիրյալ զավակների ներդրումը, որոնցից շատերն այդպես էլ չտեսան իրենց ստեղծած բանակի փառավոր ներկան, քանզի նահատակվեցին Արցախի պաշտպանության համար մղված մարտերում՝ մենք գլուխ ենք խոնարհում հայրենիքի ազատության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների առջև:

Այսօր Հայոց բանակն ապահովում է մեր ժողովրդի արժանապատիվ ու անվտանգ կյանքը, և մենք պարտական ենք յուրաքանչյուր օր մեր անդորրը դիրքերում և խրամատներում պաշտպանող հերոս հայ զինվորին:

Հարգելի հայրենակիցներ շնորհավորելով Բանակի տոնի կապակցությամբ՝ մաղթում եմ բոլորիս քաջառողջություն, խաղաղություն, մեր զինվորներին բարի ծառայություն, մարտական բարձր ոգի ու նորանոր ձեռքբերումներ ռազմական գործում:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ